

ՏԵՔՍԻԼ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՎ ԹԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.4.43

Հիմնաբառեր. տեքստիլ թափոն, խելացի աղբարկղ, ափսկայինգ, վերամշակում, երկրորդային օգտագործում, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, էկոլոգիա, գիտակցված սպառում, բարեգործական հիմնադրամ

Տեքստիլ թափոնների կառավարման խնդիրը բավական արդիական է: Տեքստիլը կարող է նույնիսկ ավելի վնասակար լինել, քան պլաստիկը, իսկ մարդկության գիտակցության մեջ տեքստիլ թափոնները, որպես վերամշակման ենթակա օգտակար թափոններ, այդքան էլ արմատավորված չեն, հետևաբար՝ առկա է թափոնների փրկապետողների շահադրաման խնդիր, որի լուծմանը կնպաստի տեքստիլ թափոնների հավաքագրման ֆանդամարտների ներդրումը: Բայց և այնպես, խնդրի հիմնական լուծումն ինքնին «վատ սովորություններից» հրաժարվելն է և դեպի գիտակցված սպառումը գնալը: Այդուհանդերձ, պետք է նշել, որ տեքստիլ թափոնների կառավարման վիճակը վերջին մի քանի տարիների ընթացքում սկսել է փոխվել, և արձանագրվում է խնդրի լուծմանն ուղղված որոշակի ակտիվություն: Այս առումով, ամենահեռանկարային ուղիներից մեկը համարվում է հազուադեպ վերամշակումը:

Սուրբակի վրա առկա է անպիտան հագուստի պատկառելի քանակություն, որը կարող է վերամշակվել, և դա ունի մեծ հեռանկար: Մենք սովոր չենք չօգտագործվող հագուստը համարել թափոն, ինչպես, օրինակ, պլաստիկ տոպրակը, սակայն նորաձևության արդյունաբերությունը նավթարդյունաբերությունից հետո երկրորդ ամենաշատ աղտոտողն ու էկոլոգիապես կործանարարն է աշխարհում: Վերջինս հատկապես մեծ ազդեցություն ունի տնտեսապես ավելի աղքատ երկրների բնակչության կյանքի որակի վրա¹: Եվ



Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ»
հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ: 2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրատարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

<https://orcid.org/0000-0001-8888-045X>

¹ ՀՀ զբոսաշրջության կոմիտեի ֆեյսբուքյան էջ, <https://www.facebook.com/ArmeniaTourismCommittee/posts/pfbid0hBpvdUfB1Gj6JctESgzEzfL7VnWQikfTehL-Gm2wS519TZnAnsm3b6Dkv458zNgrxl>

նելով տեքստիլ թափոնների առանձնահատկություններից՝ դրանց կառավարումը դարձել է ժամանակի հրամայականը:

Համաշխարհային շուկայում արդեն կան հսկայական արտադրություններ, որոնք կառուցվում են տեքստիլ թափոնների հիման վրա, իսկ որպես հումք օգտագործվում է այլ երկրներից բերված՝ դեն նետված գործածական տեքստիլը:

Տեքստիլ թափոնը, որպես երկրորդական հումք, ոչ պակաս առևտրային հետաքրքրություն է ներկայացնում, քան պլաստիկը, ալյումինը, ապակին և թուղթը: Երկրի յուրաքանչյուր բնակչին տարեկան բաժին է ընկնում մոտ 20 նոր հագուստ և կոշիկ: Ընդհանուր առմամբ, ամեն տարի արտադրվում են 150 միլիարդ նոր իրեր, ինչը նորաձևության արդյունաբերությունը մոլորակի հիմնական աղտոտողներից մեկն է դարձնում: Այս պարագայում աղտոտողը ոչ միայն տեքստիլ թափոններն են, այլև ածխաթթու գազի և թունավոր նյութերի արտանետումները, որոնք ձևավորվում են տեքստիլի արտադրության ընթացքում²: Բայց միայն հագուստի արտադրությունը չէ, որ վնասակար է շրջակա միջավայրի համար, մեծ ազդեցություն է թողնում նաև մեր հագուստի օգտագործման և խնամքի ձևը³:

Տեքստիլը քայքայվում է 20-200 տարի՝ արտազատելով մեթան, ածխաթթու գազ և այլ վնասակար քիմիական նյութեր, որոնք արտանետվում և տեղակայվում են հողի ու ստորերկրյա ջրերի մեջ: Համաշխարհային օվկիանոսում առկա միկրոպլաստմասսաների 20-35%-ն են առաջացել է տեքստիլի արտադրության հետևանքով: Այս ամենից բացի, տարեկան 108 մլն տոննա չվերականգնվող բնական ռեսուրսներ օգտագործվում են հագուստ պատրաստելու համար: Աշխարհում արտադրվող հագուստի 60%-ը սինթետիկ է: Սինթետիկ նյութերից պատրաստված հագուստի թափոնն ավելի շատ վնաս է հասցնում, քան պոլիէթիլենային տոպրակը՝ բաղադրությունը նույն

է, բայց ձևը՝ տարբեր, և դրա մշակման համար աշխատանքային ենթակառուցվածքներ դեռևս չկան: Տեքստիլի արտադրության մեջ առկա է նաև վերամշակման հակադարձ գործընթացը: Օրինակ՝ օգտագործվում է պոլիէսթերը, որի վրա կա նշում՝ «100% վերամշակված», ինչը նշանակում է, որ արդեն իսկ այն պատրաստված է շտերից: Կա նաև վերամշակված նեյլոն, որը պատրաստված է վերամշակված ձկնորսական ցանցերից: Այսինքն՝ դա նույնպես մեկ այլ թափոնի վերամշակված արտադրանք է: Նույն կերպ էլ չվերականգնվող բնական ռեսուրսները չեն ծախսվում հագուստի արտադրության մեջ: Աշխարհում օգտագործված հագուստի միայն 25%-ն է հավաքվում վերաօգտագործման և վերամշակման համար: Հավաքված հագուստի միայն 1%-ն է վերամշակվում հագուստի մեջ⁴:

Մեծաքանակ տեքստիլ թափոններ առաջանում են նաև այնպիսի խոշոր պետական կառույցներում, որտեղ օգտագործվում է համազգեստ, օրինակ՝ բանակում, քրեակատարողական ծառայությունում, առողջապահական, գիշերօթիկ հաստատություններում և այլն: Այդ թափոնները հեռացվում են կենտրոնացված եղանակով: Պետական մարմինները տեքստիլն ուղարկում են անմիջապես վերամշակողներին՝ կառավարության պայմանագրերի համաձայն⁵:

Այժմ, առավել քան երբևէ, գիտակցված սպառումը և ողջամիտ մոտեցումը ժամանակի հրամայական են և գնալով ավելի ընդունելի են դառնում աշխարհում:

Ինչ վերաբերում բնակչության, ձեռնարկությունների տեքստիլ թափոնների ճակատագրին, ապա նաև ամբողջ աշխարհում, նաև ՀՀ-ում չկա տեքստիլ թափոնների հավաքման և վերամշակման կենտրոնացված համակարգ:

Բայց և այնպես, Հայաստանը նույնպես թափոնների կառավարման ոլորտում մեծ բարեփոխումների նախաշեմին է: Մեկնարկել է պիլոտային ծրագիր, որի համա-

² Вторая жизнь ненужной одежды, Маргарита Парфененкова, https://www.vedomosti.ru/ecology/protection_nature/articles/2022/03/24/914990-vtoraya-zhizn-nenuzhnoi-odezhdi
³ Sustainability and Preventing Textile Waste: 6 Tips to Make Your Clothes Last Longer, Christopher Isak, 25.05.2022, <https://techacute.com/6-tips-make-your-clothes-last-longer/>
⁴ Факты о текстиле и его переработке, <https://vtoe.ru/pererabotka/fakty-o-tekstile-i-ego-pererabotke/>
⁵ Вторая жизнь ненужной одежды ,Маргарита Парфененкова, https://www.vedomosti.ru/ecology/protection_nature/articles/2022/03/24/914990-vtoraya-zhizn-nenuzhnoi-odezhdi

ԱՂՅՈՒՍԱԿ 1

«Ը թափոնների կառուցվածքը (%)»⁶

Թափոնների բաղադրությունը	Տոկոսային հարաբերակցությունը, %
Կենսաբայթայվող (օրգանական)	30-60
Թուղթ, ստվարաթուղթ	5-12
Պլաստմասսա (PET, PS, PP, PVC, HDPE)	7-20
Մետաղ	1-4
Ապակի	3-6
Կաշի-ռետին	1-4
Տեքստիլ	2-6

ձայն՝ արդեն իսկ տեղադրվել են կապույտ և դեղին աղբամաններ, համապատասխանաբար՝ պլաստիկի, պոլիէթիլենի և թղթի համար: Ապագայում հայտնվելիք կարմիր աղբամաններն էլ տեքստիլի՝ հագուստի, կտորի համար կլինեն⁷:

Այս ուղղությամբ արդեն իսկ իրականացվել է նաև «Նորածնության և տեքստիլ արդյունաբերության կայուն էկոհամակարգ Հայաստանում» ծրագիրը, որի հիմնական նպատակն է եղել մշակել կայուն արտադրության վերամշակման մոդել (տեքստիլ արտադրանքի թափոնների վերամշակում)՝ տեքստիլ արտադրողների հետ համագործակցության միջոցով⁸:

Պայմանավորված թափոնների մեջ տեքստիլի մեծ տեսակարար կշռով (2-6%)՝ շատ կարևոր է վերջինիս կրկնակի օգտագործումը կամ վերամշակումը՝ նվազագույնի հասցնելով բուն տեքստիլ թափոնը:

Տեքստիլ թափոնների պատճառած վնասներից զերծ մնալու համար լավագույն լուծումն այն ուղղակիորեն համապատասխան վայր հանձնելն է, որտեղ և կորոշվի վերջինիս հետագա ճակատագիրը: Այս խնդրի լուծմանը բազմաթիվ երկրներում մոտենում են մասնագիտորեն՝ ստեղծելով հատուկ ենթակառուցվածքներ, որոնք զբաղվում են տեքստիլ թափոնների առաջացրած էկոլոգիական, տնտեսական վնասները նվազագույնին հասցնելով: Սակայն, շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, նման վայրեր առկա չեն:

Խնդրի մեղմման տեսակետից, բավական արդյունավետ է առաջնային հանրային վայրերում հատուկ տարաների տեղակայումը: Այդուհանդերձ, միայն տարաների տեղադրմամբ խնդիրը չի լուծվում. կարևոր է նաև մասնագիտացած ենթակառուցվածքների ձևավորումը, որոնք հետագայում կզբաղվեն տարաների պարունակությամբ: Այժմ Հայաստանում ո՛չ տարաներ են տեղադրված, ո՛չ էլ համապատասխան ենթակառուցվածքներ են առկա:

Աշխարհում, այս առումով, գոյություն ունի փորձ, որի համաձայն՝ գործում են հատուկ հիմնադրամներ, որոնք էլ իրականացնում են տեքստիլ թափոնների կառավարման գործընթացը՝ սկսած տարաների տեղադրումից մինչև վերամշակում՝ կանխելով հագուստի հայտնվելն աղբավայրերում: Տարաները տեղադրվում են հանրային տարածքներում, հիմնականում՝ առևտրի և բիզնեսի խոշոր կենտրոններում, բնակելի համալիրներում, և երբ հագուստը հանձնվում է հատուկ տարաներ, հիմնադրամն իրերը ենթարկում է տեսակավորման և, կախված վիճակից, դրանք դասակարգում՝ որպես կրկին օգտագործելու պիտանի կամ վերամշակման ենթակա⁹:

Հիմնադրամները, ցանկանալով սպառողների մեջ զարգացնել գիտակցված սպառողական վարքագիծ, նույնիսկ իրենց ենթակառուցվածքներում ունենում են հա-

⁶ Կառավարելի և անկառավարելի թափոններ. ինչպե՞ս նվազագույնի հասցնել թափոնները և առավելագույնս օգտագործել ռեսուրսները, Սառա Պետրոսյան, 11.01.2020, <https://hetq.am/hy/article/111995>

⁷ Կապույտում՝ պլաստիկ, դեղինում՝ թուղթ. Երևանում ինչպես է պետք այսուհետ տեսակավորել աղբը, 1.02.2021, <https://armeniasputnik.am/20210201/kapuytum-plastik-dexinum-tuxt-yerevanum-inchpese-petq-aysuhet-tesakavorel-ax-by-26293234.html>

⁸ «Նորածնության և տեքստիլ արդյունաբերության կայուն էկո-համակարգ Հայաստանում», 30/11/2019, <https://b24.am/economy/79596.html>

⁹ Факты о текстиле и его переработке, <https://vtoroe.ru/pererabotka/fakty-o-tekstile-i-ego-pererabotke/>

գուստի վերանորոգման բաժին, որը գործում է անվճար: Այս կերպ վերջիններս ցանկանում են նպաստել հին հագուստի օգտակարության բարձրացմանը (ՕԳԳ), ինչպես նաև որքան հնարավոր է՝ ուշ թափոն դառնալուն:

Սակայն, համակարգային լուծումը կտրվի, եթե ստեղծվեն և գործարկվեն ծրագրեր, որոնք կգրադվեն տեքստիլ թափոնների կառավարմամբ՝ սկզբից մինչև վերջ: Նման ծրագրեր արդեն իսկ կան ՌԴ-ում, որոնք բաց են համագործակցության համար: Օրինակ՝ «Երկրորդ շունչ» ծրագիրը հիմնադրել է ենթակառուցվածք, որը զբաղվում է վերաօգտագործմամբ և վերամշակմամբ, տեքստիլի առանձին հավաքմամբ, տեսակավորմամբ և վերաբաշխմամբ: Գործունեությունն իրականացնում է սեփական միջոցների հաշվին, ինչպես նաև սերտորեն համագործակցում է արագ նորաձևության ոլորտի գործընկերների հետ, որոնք իրենց խանութներում կազմակերպում են տեքստիլի ընդունման ակցիաներ: Վերամշակման համար ընդունվում են նաև խոտանները: Ծրագրի որդեգրած բիզնես մոդելը հիմնված է այն փաստի վրա, որ հավաքված հագուստի մի մասը վաճառվում է նախագծի ծախսերը փոխհատուցելու համար: Խանութների և մեծածախ գնորդների համագործակցությունը շահագրգռելու նպատակով կարևորվում է հայտնի ապրանքանիշների բարձրորակ հագուստի հավաքագրումը:

Տեքստիլ թափոնների կառավարման գործընթացի համակարգավածությունն անչափ կարևոր է՝ պայմանավորված դրանց առանձնահատկությամբ: Եթե տեքստիլը հայտնվում է ընդհանուր աղբի մեջ, նույնիսկ աղբի առանձին հավաքման համար նախատեսված տարայում, անմիջապես կլանում է խոնավությունն ու հոտը՝ կորցնելով իր օգտակարությունը և այլևս ենթակա չի լինում վերամշակման՝ վերջնարդյունքում հայտնվելով աղբավայրերում:

Բազմաթիվ երկրներում, օրինակ՝ Շվեյցարիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում, ոչ նպատակային աղբամանի մեջ աղբ զցելը պատժվում է տուգանքով, իսկ


Ճապոնիայում և Իռլանդիայում՝ նույնիսկ ազատագրկմամբ¹⁰:

Ինչ վերաբերում է ֆանդոմատների (գերմաներեն՝ phand (գրավ) և futomat (ավտոմատ) բառերից) ստեղծման ծախսատարությանը, ապա վերջիններս, լինելով բնապահպանական ուղղվածության, ունեն հատուկ նպատակային ծրագրերի կողմից ֆինանսավորվելու ներուժ: Կարևոր է այն փաստը, որ աշխարհում արդեն իսկ ստեղծված են նմանատիպ սարքավորումներ (օրինակ՝ պլաստիկ շշերի համար), և կան համապատասխան արտադրողներ, այսինքն՝ գործընթացը զրոյից չի սկսվելու, այլ պարզապես վերաձևակերպվելու է դրա ուղղվածությունը, ինչը պակաս ծախսատար է:

Պետական մակարդակով խնդրի լուծման դեպքում օրենսդրական կարգավորմամբ ֆանդոմատի ծախսածածկման մեկ այլ կառուցակարգ կարող է լինել տեքստիլի վաճառքի ժամանակ հատուկ գերավճարի ավելացումը, որը հետագայում միայն հնարավոր կլինի վերադարձնել: Պարզապես, խնդիրն այստեղ ծախսատարությունն է, քանի որ եթե սարքավորումը կանխիկ կամ անկանխիկ դրամ տրամադրի, ապա պետք է նաև ապահովվի վերջինիս բանկային սպասարկումը: Ֆանդոմատների տեղադրումը խթանելու այլընտ-



¹⁰ Деньги в урне: как стартапы осваивают «мусорный рынок», Подробнее на РБК: <https://trends.rbc.ru/trends/green/5d655a679a794767388a0ea0>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տեքստիլ թափոնների արդյունավետ կառավարման պարբերաշրջան

րանքային միջոց կարող է հանդիսանալ նաև խնդրով մտահոգ կազմակերպություններին որոշակի հարկային արտոնությունների տրամադրումը:

Որպես տեքստիլ թափոնների խնդրի հաղթահարման ուղի՝ վերջին շրջանում արդիական է դարձել ափսկայինգը (upscaling) կամ «իրերին երկրորդ կյանք տալը»: Դասկիզբ է առել Գերմանիայում՝ դեռ 1990-ականներին, երբ հայտնի դարձավ աղբի արժեքավորությունը: Լինելով աղբի վերամշակման ինքնատիպ տեսակ՝ դրա շնորհիվ ձեռք են բերվում առօրյա կյանքում գործածական՝ նոր և շատ օգտակար իրեր: Ափսքայինգը (upscaling) այժմ ամենից շատ սկսել է կիրառվել նորաձևության արդյունաբերության մեջ¹¹:

2021 թվականին էկո-թրենդը շարունակեց թափ հավաքել, քաղաքացիները սկսեցին ավելի ու ավելի շատ անհարկի իրերի երկրորդ կյանք տալ և վաճառել դրանք առցանց հարթակներում¹²:

Կան նույնիսկ ապրանքանիշներ, որոնք հազուստի ստեղծման համար օգտագործում են ափսկայինգի մեթոդը: Օրինակ՝ գերմանացի դիզայներ Վիլֆրիդ Պլեցինգերը նույն «Nike»-ի կամ «Adidas»-ի սպորտային հագուստից վառ և ոճային մոդելներ է ստեղծում, իսկ ԱՄՆ-ում հիմնադրված «Deborah Lindquist Eco Fashion Brand»-ը և «Patagonia»-ն աշխատում են էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներով, այդ թվում՝ ըստ վերափոխման տարրերի¹³:

Հագուստի վերամշակումն ավելի դժվար է: Որպես կանոն, այստեղ առաջնայինը բարեգործությունն է: Շատ հիմնադրամներ հավաքում են լավ վիճակում գտնվող իրեր, որպեսզի տան կարիքավորներին, սակայն առավել մասնագիտացածները զբաղվում են դրանց վերամշակմամբ¹⁴:

Հազվադեպ խանութներ իրենք են հավաքում հագուստ՝ երբեմն ոչ միայն իրենցը, այլև յուրաքանչյուր ապրանքանիշի՝

¹¹ Вторая жизнь ненужной одежды, Маргарита Парфененкова https://www.vedomosti.ru/ecology/protection_nature/articles/2022/03/24/914990-vtoraya-zhizn-nenuzhnoi-odezhdi

¹² Նույն տեղում:

¹³ Новая жизнь ненужных вещей - апсайклинг снова в моде, Юлия Однопог, <https://miridei.com/idei-dlya-doma/interior-ideas/novaya-zhizn-nenuzhnyh-veschej-apsajkling-snova-v-mode/>

¹⁴ У меня есть ненужные вещи и вторсырье. Куда их отдать? И можно ли на этом заработать? <https://tass.ru/obschestvo/6484694>

անկախ դրա վիճակից: Այնուհետև այդ հազուստը կիրառվում է երեք նպատակով. կամ վաճառք օգտագործված հազուստի խանութներում, կամ վերամշակում՝ որպես տեխնիկական անձեռոցիկ կամ էլ որպես տեքստիլ մանրաթել, որն այնուհետև կուղղվի նոր իրերի արտադրությանը¹⁵:

Նորաձևության մեջ վերամշակումը ենթադրում է, որ այն, ինչն ի սկզբանե նախատեսված էր նետել աղբարկղ, կարող է դեռ օգտագործվել ապագայում: Հազուստի օգտագործումը հիմնականում կարող է լինել ոչ իր նպատակով, իսկ վերամշակումը տեքստիլի տեսակավորման և մանրացման գործընթացն է՝ նոր իրերի արտադրության համար նոր մանրաթել ստանալը¹⁶:

Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ կարելի է տեսնել, որ այսօր զանգվածային շուկայի հսկաների շրջանում շրջակա միջավայրի համար գլխավոր պայքարողներից մեկը «H&M» ապրանքանիշն է, որը ստեղծել է «Conscious» շարքը՝ կենտրոնացած վերամշակված նյութերի օգտագործման վրա: Բացի այդ, շատ երկրներում «H&M» խանութներում կարելի է յուրաքանչյուր ապրանքանիշի անցանկալի հազուստ բերել ու թողնել հատուկ տարայի մեջ՝ միաժամանակ ստանալով վաուչեր հաջորդ գնման համար: Լավ վիճակի իրերն այնուհետև ուղարկվում են օգտագործված իրերի խանութներ, իսկ տեքստիլները, որոնք ոչ պիտանի են իրենց նպատակային օգտագործման համար, վերամշակվում են նոր ապրանքների, և բոլոր ապրանքները, որոնք չեն կարող վերօգտագործվել, հատուկ ձեռնարկություններում վերածվում են տեքստիլ մանրաթելերի: «H&M»-ը հազուստի հավաքածուից ստացված հասույթը ներդնում է տեքստիլի վերամշակման գործընթացների հետազոտության մեջ: Այս առումով, վերջինս, նախևառաջ, կորպորատիվ սո-

ցիալական պատասխանատվության փայլուն օրինակ է՝ օգնելով աշխարհն ավելի մաքուր դարձնելուն¹⁷:

Այժմ ապրանքանիշների շրջանում բավական տարածված է հին հազուստ հանձնելու դիմաց հաջորդ գնման համար զեղչի (օրինակ՝ մինչև 15%) տրամադրումը: «IKEA»-ն հավաքում է տնային տեքստիլ և անկողնային սպիտակեղեն¹⁸:

Տեքստիլ թափոնները նախ տեսակավորվում են ըստ կազմի ու նշանակության: Կրելու համար պիտանի հազուստներն առանձնացվում են՝ հետագայում ուղարկվելով աջակցող հիմնադրամներ կամ վաճառվելով երկրորդային օգտագործման հազուստի վաճառքի հարթակներում՝ որոշ չափով ծրագրի ծախսերը հոգալու համար:

Միաժամանակ, ոչ պիտանի հազուստները տեսակավորվում են առանձին՝ ըստ գործվածքի տեսակի (բամբակ, ակրիլ, սինթետիկ և այլն), այնուհետև՝ ըստ գույնի: Նման մանրակրկիտ տեսակավորման պատճառն այն է, որ տարբեր գործվածքներ մշակվում են տարբեր սարքավորումներով, ուստի դրանք պետք է առանձնացնել՝ ըստ կազմի, հեռացնել բոլոր արեստուարները, և այս բոլոր գործընթացները կատարվում են ձեռքով, քանի որ այլ կերպ հնարավոր չէ¹⁹:

Հարկ է նշել, որ տեքստիլի՝ ճիշտ կազմակերպված վերամշակումը կարող է դառնալ եկամտաբեր գործ՝ մասամբ լուծելով համապատասխան արտադրության հումքի պակասը²⁰: Միաժամանակ, բամբակի կամ դրա բարձր պարունակությամբ (ավելի քան 70%) իրերի թափոններից կարելի է ստանալ տեխնոլոգիական անձեռոցիկի արտադրական հումք, որը մշտապես մեծ պահանջարկ ունի, քանի որ օգտագործվում է արդյունաբերության մեջ: Տեքստիլի թափոններից առավել վերամշակման ենթակա է բամբակը, որը նույնիսկ օգտագործվում է նոր նյութի մեջ. մանրացված,

¹⁵ Как ваша старая одежда может помочь спасти планету, https://www.vogue.ru/fashion/news/kak_vasha_staraya_odezhda_mozhet_pomoch_spasti_planetu, 15 ноября, 2018:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Что делают из ненужной одежды и обуви, Варя Баркалова, 13.05.2019, <https://theblueprint.ru/fashion/industry/chto-delajut-iz-pererabotanoj-odejdy-i-obuvi>

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Вторая жизнь ненужной одежды, Маргарита Парфененкова, https://www.vedomosti.ru/ecology/protection_nature/articles/2022/03/24/914990-vtoraya-zhizn-nenuzhnoi-odezhdi

վերամշակված բամբակը խառնվում է առաջնային բամբակի հետ, որից հետո մանրաթելերը ոլորվում են, և այս խառնուրդը հումք է դառնում ջինսե և խիտ բամբակյա այլ գործվածքների արտադրության համար²¹: 100% պոլիէթեր պարունակող տեքստիլ թափոնի վերամշակումից ստանում են պլաստիկ հատիկներ, որոնցից հետագայում պատրաստում են գրիչներ, կախիչներ և այլ իրեր: Սինթետիկներն օգտագործվում են, այսպես կոչված, վերականգնված մանրաթել արտադրելու համար: Նման գործունեությանը զբաղվող շատ կազմակերպություններ իրենց փորձով վկայում են, որ հնարավոր է վերամշակել թափոններն այնպես, որ ոչինչ չգնա աղբավայր (բուն թափոնը մուտքային իրերի 1%-ից էլ քիչ է), իսկ բուն թափոնն էլ այրում են՝ ստանալու էներգիա:

Հատկապես զարգացած երկրներում, որտեղ գործում են մասնագիտացած ծրագրեր, մշակվում են առցանց քարտեզներ՝ իրենց հավելվածներով, որոնք թույլ են տալիս օպերատիվ կերպով իրականացնել տեքստիլ թափոնների կառավարումը: Առաջնորդվելով համապատասխան տեղեկություններով՝ կարելի է իմանալ, թե որն է տեքստիլ թափոնի հանձնման ամենամոտ կետը, ինչպես նաև, թե որտեղից կարելի է ստանալ երկրորդային օգտագործման հագուստ (օրինակ՝ ՌԴ-ում մշակվել է նման առցանց քարտեզ՝ «Recycle Map» անվանմամբ)²²:

Գոյություն ունեն նաև հավելվածներ, որտեղ հնարավոր է լրացնել հայտ՝ տեքստիլ թափոն հանձնելու համար, որը թույլ կտա ազատվել վերջինից՝ առանց դուրս գալու տնից:

Հայաստանում, ցավոք, շատ դժվար է

գտնել տեքստիլ թափոնի ընդունման կետեր, իսկ ինչ վերաբերում է վճարովի հիմունքով դրա ընդունմանը, ինչպես շշերի, թղթի կամ այլ թափոնների դեպքում է, այս մասին ընդհանարապես խոսք չկա:

Այն դեպքում միայն, երբ մարդկությունը լիարժեքորեն գիտակցի տեքստիլ թափոնների արժեքավորությունը և, ընդհակառակը, թերարժևորման դեպքում՝ խնդրահարույց լինելը, սառույցը տեղից կշարժվի: Այս պարագայում միայն հիմնախնդրի լուծումն աստիճանաբար կվերաժվի համակարգված գործողությունների ամբողջության: Իսկ դրա լուծման ուղիները բազմազան են. նախևառաջ, յուրաքանչյուր նման նախաձեռնության արդյունավետությունը պետք է վերլուծվի ըստ օբյեկտիվ ցուցանիշների, որպեսզի դա ինքնանպատակ չլինի: Միայն հատուկ տարաների տեղադրմամբ և հավաքված հագուստի վրա կենտրոնանալով՝ գործը տեղից չի շարժվի: Անհրաժեշտ է իրականացնել քանակական չափումներ երկար ժամանակահատվածում՝ օրինաչափությունները բացահայտելու և անհրաժեշտության դեպքում՝ համակարգը վերակազմավորելու համար:

Տեքստիլ թափոնների կառավարման ծրագրերը տարբեր երկրներում տարբեր են՝ սկսած շահադրող համակարգերի ներդրումից՝ վերջացրած տարաների տեղադրմամբ, բայց դրանք բոլորն էլ կարող են արդյունավետություն ապահովել միայն այն դեպքում, երբ համընդհանուր կերպով ազդեն սպառողի գիտակցության վրա՝ վերջինիս դարձնելով պատասխանատու: Բարդ գործընթաց է, բայց հարկավոր է փորձել քայլ առ քայլ առաջ գնալ՝ եթե ոչ լուծելով, ապա գոնե մեղմելով խնդիրը:

²¹ Как ваша старая одежда может помочь спасти планету, https://www.vogue.ru/fashion/news/kak_vasha_staraya_odezhda_mozhet_pomoch_spasti_planetu, 15 ноября, 2018.

²² Նույն տեղում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություն, 2020, <https://ace.aua.am/files/2020/08/WQCS-Report-Arm.pdf>
2. Կապույտում՝ պլաստիկ, դեղինում՝ թուղթ. Երևանում ինչպես է պետք այսուհետ տեսակավորել աղբը, 1.02.2021, <https://armeniasputnik.am/20210201/kapuytum-plastik-dexinum-tuxt-yerevanum-inch-pese-petq-aysuhet-tesakavorel-axby-26293234.html>
3. «Նորածնության և տեքստիլ արդյունաբերության կայուն էկոհամակարգ Հայաստանում», 30/11/2019, <https://b24.am/economy/79596.html>
4. Կառավարելի և անկառավարելի թափոններ. ինչպես նվազագույնի հասցնել թափոնները և առավելագույնս օգտագործել ռեսուրսները, Սառա Պետրոսյան, 11.01.2020, <https://hetq.am/hy/article/111995>
5. Вторая жизнь ненужной одежды, Маргарита Парфененкова, https://www.vedomosti.ru/ecology/protection_nature/articles/2022/03/24/914990-vtoraya-zhizn-nenuzhnoi-odezhdi
6. Факты о текстиле и его переработке, 15 ноября 2018 г., <https://vtoroe.ru/pererabotka/fakty-o-tekstile-i-ego-pererabotke/>
7. Как ваша старая одежда может помочь спасти планету, 15 ноября 2018 г., https://www.vogue.ru/fashion/news/kak_vasha_staraya_odezhda_mozhet_pomoch_spasti_planetu
8. Новая жизнь ненужных вещей - апсайклинг снова в моде, Юлия Однорог, <https://miridei.com/idei-dlya-doma/interior-ideas/novaya-zhizn-nenuzhnyh-veschej-apsajkling-snova-v-mode/>
9. Деньги в урне: как стартапы осваивают «мусорный рынок», Подробнее на РБК: <https://trends.rbc.ru/trends/green/5d655a679a794767388a0ea0>
10. У меня есть ненужные вещи и вторсырье. Куда их отдать? И можно ли на этом заработать? <https://tass.ru/obschestvo/6484694>
11. Что делают из ненужной одежды и обуви, Варя Баркалова 13.05.2019, <https://theblueprint.ru/fashion/industry/chto-dela-jut-iz-pererabotannoj-odejdy-i-obuvi>
12. Что такое вторичное использование и каким вещам можно дать шанс на новую жизнь? 30.09.2021, Софья Урманчеева, <https://strelkamag.com/ru/article/vtorichnoe-ispolzovanie>
13. Sustainability and Preventing Textile Waste: 6 Tips to Make Your Clothes Last Longer, Christopher Isak, 25.05.2022, <https://techacute.com/6-tips-make-your-clothes-last-longer/>

Тереза ШАГРИМАНЯН

Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ

ОКРУЖАЮЩАЯ СРЕДА И ИЗМЕНЕНИЕ КЛИМАТА

РЕЗУЛЬТАТЫ ОЦЕНИВАНИЯ И ПОСЛЕДСТВИЯ НЕДООЦЕНИВАНИЯ ТЕКСТИЛЬНЫХ ОТХОДОВ

Проблема обращения с текстильными отходами достаточно актуальна. Любой текстиль может быть даже вреднее пластика, а текстильные отходы не укоренились в сознании человечества, как полезные отходы, подлежащие вторичной переработке. Поэтому перед нами стоит проблема мотивации всех потенциальных владельцев отходов, которые помогут решить эту проблему, внедрение фандомов по сбору текстильных отходов. Однако главное решение проблемы — отказаться от «вредных привычек» и перейти к осознанному потреблению. В настоящее время ситуация с управлением текстильными отходами в последние несколько лет начала меняться и наблюдается определенная активность в направлении решения проблемы. Одним из наиболее перспективных направлений в этом отношении считается переработка одежды.

Ключевые слова: *текстильные отходы, умная корзина, апсайклинг, вторичное использование, корпоративная социальная ответственность, экология, осознанное потребление, благотворительность*

Tereza SHAHRIMANYAN

Administrator of the Amberd Research Center, ASUE

ENVIRONMENT AND CLIMATE CHANGE

RESULTS OF VALUING AND CONSEQUENCES OF UNDERESTIMATING TEXTILE WASTE

The problem of textile waste management is quite relevant. All textiles can be even more harmful than plastic, and textile waste is not so rooted in the consciousness of mankind as a useful waste subject to recycling. Therefore, we have a problem of motivating all potential waste owners, which will help to solve it. introduction of textile waste collection fandoms. However, the main solution to the problem is to abandon the "bad habits" and move towards conscious consumption. Now the situation of textile waste management has started to change in the last few years and there is a definite activity towards solving the problem and one of the most promising ways in this regard is considered to be recycling of clothes.

Keywords: *textile waste, smart bin, upscaling, secondary use, corporate social responsibility, ecology, conscious consumption, charity*